# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

"01" նոյեմբերի 2012թ. № 112 -Ա

## ՍԵՎԱԴԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի բ/ և դ/ կետերի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կրթության պետական տեսչության կողմից ս/թ սեպտեմբերի 26-ից մինչև 29-ը «Վաղատինի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում կատարված ուսումնասիրության վերաբերյալ տեղեկանքի և ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի զեկուցագրի, **կ ա ր գ ա դ ր ում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Վաղատինի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սևադա Գրիգորյանին հայտարարել նկատողություն՝ կազմակերպության կանոնադրությամբ վերապահված լիազորությունները ոչ պատշաճ կատարելու համար:

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին կետ, ՀՀ Սյունիքի մարզի «Վաղատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ իրականացված ուսումնասիրության վերաբերյալ տեղեկանքը և մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի զեկուցագիրը:

2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2012թ. նոյեմբերի 1
ք. Կապան